

•

Ներկայացման մը մէջ դերասան մը իննսուն տարեկան ծերունիի մը դերը կկատարէր:

Պառաւիւն մէկը այս դերասանին հազարով տքալով տեսարան գալը տեսնելով ըսաւ.

–Տէ՛ր ողորմեա... կը վայելէ՞, որ ասանկ ծեր մարդ մը խաղցունեն:

•

Միամիտ մարդուն մէկը, առեւտրական գործերէ քաշուած՝ ազարակի մը մէջ կեանք կ'անցունէր:

Այս մարդն օր մը բարեկամներէն մէկուն նամակ մը գրելով այսպէս կ'ըսէր.

«Ազարակին կենդանիներուն մէջ ընդհանուր հիւանդութիւն կտիրէ. գրեթէ ես ալ քաջառողջ վիճակ մը չունիմ»:

•

–Իմացա՞ր. մեր դրացին դարձեալ սնանկացեր է անցեալ շաբթու:

–Անիկայ տարին քանի մ'անգամ սնանկանալն բան գործ ըրած է իրեն:

–Խեղճութեանը մի՛ նայիր, անիկայ գործը գիտցող մարդ է. անպատճառ բան մը նետած է մէկ կողմ:

–Այո՛, խղճմտանքը:

•

Գինեմովին մէկը չափազանց արբեալ՝ կէս օրին գինետունէն դուրս ելնելուն՝ մէկուն կը հանդիպի եւ արեւը ցուցնելով կհարցնէ անոր.

–Կը խնդրեմ, ըսէ՛ ինձ, լուսին է աս, թէ արեւ:

Անցորդը գինովին երերուն վիճակը տեսնելով՝ կը պատասխանէ.

–Շիտակը չեմ գիտեր. ես աս տեղացի չեմ:

## ԱՌԱՇՆԵՐ

Ճարտարութիւնը բախտի աջ ձեռքն է, չափաւորութիւնը՝ ձախ ձեռքը:

Ծոյլի համար ամեն բան դժուար է:

Շատ պարտք ընողն ազատութիւնն ձեռքէ կհանէ ու հազար նեղութեանց մէջ կ'իյնայ: